Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
սեպտեմբերի 3-ի N 583 -Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է խթանել Արցախի Հանրապետության բնակչության սոցիալ-տնտեսական հզորացումը և կայուն տնտեսական զարգացումը՝ կրթական, խորհրդատվական և դրամաշնորհային բաղադրիչների միջոցով: Ծրագրի շնորհիվ տարբեր կրթություն և հմտություն ունեցող արցախցիներ հնարավորություն կունենան ընդլայնելու սեփական զբաղվածությունն ապահովելու և աշխատանք գտնելու հնարավորությունները: Ծրագիրը նաև նպատակ ունի զարգացնելու պետական ծառայողների մասնագիտական հմտությունները:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ), 55 Արևելք, 59-րդ փող. Նյու Յորք, NY 10022-1112
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արցախի Հանրապետություն, քաղ. Ստեփանակերտ, կրթական
6.	Ծրագրի բյուջեն	44,510,436 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Արցախի Հանրապետության բնակչություն
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2019 թվականի օգոստոսի 12-ից մինչև դեկտեմբերի 31-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Հայաստանի ամերիկյան համալսարանին պատվիրել ստորև նշված ծառայությունները, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 24,824,436 դրամ՝ առանց ԱԱՀ-ի. - աջակցել Արցախի Հանրապետության ամբողջ տարածքից գործարար գաղափարներ ունեցող անձանց՝ ձեռք բերելու անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ՝ կյանքի կոչելու համար իրենց գաղափարները: Բաց մրցույթի արդյունքում տարբեր մարզերից և Ստեփանակերտից ընտրված 50 մասնակից, ովքեր կներկայացնեն կենսունակ բիզնես գաղափարներ, հնարավորություն կունենան մասնակցելու հատուկ մշակված «Ձեռնարկատիրություն» թեմայով անվճար դասընթացներին: Դասընթացներն անցկացվելու են 2 խմբով՝ յուրաքանչյուրը՝ 50 դասաժամ տևողությամբ: Առավել հաջողված 12 բիզնես գաղափարներ կստանան ֆինանսական աջակցություն՝ դրամաշնորհի տեսքով: Դասընթացների ընդհանուր բյուջեն կազմում է 4,213,772 դրամ՝ առանց ԱԱՀ-ի. - կարևորելով զբոսաշրջության աճող դերը Արցախի Հանրապետությունում՝ կազմակերպել հյուրընկալության կառավարման անվճար դասընթացներ, որոնք, ելնելով տեղական պահանջներից, կներառեն այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են կայուն զբոսաշրջությունը, հյուրանոցային գործում եկամուտների կառավարումը և գործառնությունը, B&B-ն, տեսարժան վայրերի և հանգստավայրերի մարքեթինգը, տեղեկատվական համակարգերը հյուրընկալության գործում և այլն: Դասընթացները նախատեսված են առնվազն 30 մասնակցի համար՝ 40 դասաժամ տևողությամբ: Խրախուսվելու են նաև մասնակիցների նոր գաղափարները, որոնցից առավել կենսունակներին դասընթացի ավարտից հետո տրամադրվելու է անվճար խորհրդատվություն: Դասընթացների ընդհանուր բյուջեն կազմում է 1,962,050 դրամ՝ առանց ԱԱՀ-ի. - արժևորելով հանրային կառավարման դերը ներտնտեսական և միջոլորտային գործընթացների զարգացման գործում՝ Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության, Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարության և Արցախի մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի աշխատողների համար կազմակերպել կարճաժամկետ «Հանրային հատվածի կարողությունների զարգացում» վերապատրաստման դասընթացներ՝ հաշվի առնելով վերջիններիս կողմից մատնանշված առաջնահերթությունները: Կազմակերպվելու են նաև միջգերատեսչական կապեր ստեղծելուն ուղղված միջոցառումներ, որոնց ժամանակ փորձ է արվելու

		ներգրավելու նաև ՀՀ համապատասխան գերատեսչության ներկայացուցիչներին: Դասընթացների ընդհանուր բյուջեն կազմում է 2,653,402 դրամ՝ առանց ԱԱՀ-ի. - նպաստելու համար անգլերենի որակյալ արտադասարանական դասընթացների հասանելիության տարածմանը Արցախի Հանրապետությունում՝ կազմակերպել առնվազն 5 մակարդակով անգլերենի դասընթացներ՝ 16 տարին լրացած Արցախի Հանրապետության այն քաղաքացիների համար, ովքեր կցանկանան խորացնել իրենց անգլերենի գիտելիքները Հայաստանի ամերիկյան համալսարանի հատուկ դասընթացների բաժնի ծրագրով: Նախատեսվում է մինչև ծրագրի ավարտն ունենալ 200-240 անհատ մասնակից: Դասընթացների ընդհանուր բյուջեն կազմում է 15,995,212 դրամ՝ առանց ԱԱՀ-ի: Այս գումարը ներառում է 546,000 դրամի չափով որակի վերահսկման ծախսերը: 2. Մասնագետ խորհրդատուների (հարկային, իրավական) վարձավճարը 5,697,000 դրամ է: Խորհրդատվությունը տրամադրվելու է հյուրընկալության կառավարման և «Ձեռնարկատիրություն» թեմայով դասընթացների ավարտից հետո մինչև ծրագրի ժամկետի ավարտը: 3. Միջոցառումների կազմակերպում՝ 6,789,000 դրամ: Միջոցառումներ նախատեսվում են ծրագրի ամբողջ ընթացքում: 4. Դրամաշնորհների տրամադրում՝ 7,200,000 դրամ: Դրամաշնորհների տրամադրումն սկսելու է «Ձեռնարկատիրություն» թեմայով դասընթացների ավարտից հետո մինչև ծրագրի ժամկետի ավարտը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Հայաստանի ամերիկյան համալսարանին պատվիրել ստորև նշված ծառայությունները, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 24,824,436 դրամ՝ առանց ԱԱՀ-ի, և որոնք մատուցվելու են Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում. - «Ձեռնարկատիրություն» թեմայով 2 դասընթացի կազմակերպում և անցկացում. - հյուրընկալության կառավարման դասընթացների կազմակերպում և անցկացում. - հանրային հատվածի կարողությունների զարգացմանը վերաբերող 3 դասընթացի կազմակերպում և անցկացում. - անգլերենի դասընթացների կազմակերպում և անցկացում:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման համար լրացուցիչ կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավար-	Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն

	ման մարմինների և այլ մարմինների հետ	Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարություն Արցախի մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Կկիրառվի ՀԲԸՄ-ի կողմից մշակված ծրագրի արդյունավետության գնահատման գործիքակազմը: Ֆինանսական և նկարագրային հաշվետվություններ են ներկայացվում Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական վարչություն՝ ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ